

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2018

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան.....	3
1. Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառ	4
2. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ.....	8
3. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը և համագործակցությունը.....	10
4. Դիմումների քննարկում և սպառողների շահերի պաշտպանություն.....	11
5. Պետական բյուջե պարտադիր վճարների գծով մուտքերի ապահովումը և հանձնաժողովի պահպանման ծախսերի ֆինանսավորումը.....	12

ՆԱԽԱԲԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019 թվականի տարեկան գործունեության սույն ծրագիրը և կարգավորվող ոլորտների իրավիճակի մասին ծրագրին կից տեղեկանքը ամփոփ տեղեկություններ են պարունակում կարգավորվող ոլորտների իրավիճակի և առկա հիմնախնդիրների, ճյուղային օրենքներով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթների մասին և նշակվել են Արցախի Հանրապետության Սահմանադրության, «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի և հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրային ուղղությունների հիման վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) կարգավորում է էներգետիկայի (էլեկտրաէներգետիկա, ջերմամատակարարում, գազամատակարարում), հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով), ջրային համակարգերի (խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում) բնագավառները՝ օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Ծրագրի նպատակներն են՝

- հավասարակշռել սպառողների ու կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը,
- նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը՝ խթանելով մրցակցային մշակույթը.
- ապահովել հասարակության իրազեկվածության բարձրացումը, սպառողների շահերի պաշտպանությունը, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը և սակագների ձևավորման թափանցիկությունը.
- խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Հանձնաժողովը ծրագրային աշխատանքներ իրականացնելիս հաշվի է առնում Հայաստանի Հանրապետության և միջազգային փորձը, ուսումնասիրում է համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացումները:

Հանձնաժողովն իր բնականոն աշխատանքը շարունակելու է նաև 2019 թվականին՝ ապահովելով ընդունվող որոշումների կոլեգիալությունը, համապատասխանությունը

գործող օրենսդրությանը, կարգավորման թափանցիկությունը և հրապարակայնությունը: Ծրագրային աշխատանքները Հանձնաժողովը իրականացնելու է կառուցվածքային-կազմակերպչական նոր փոփոխություններով կազմավորված աշխատազմի, իսկ գործունեությունը կազմակերպելու է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով: Իրականացվելու են ուսումնասիրություններ և ստուգումներ: Իր իրավասությունների շրջանակում մասնակցելու է Արցախի Հանրապետության տնտեսական և ֆինանսական ծրագրերի մշակման աշխատանքներին:

2019 թվականին Հանձնաժողովը գործելու է սույն ծրագրի ու ծրագրից բխող ոլորտային ենթածրագրերի շրջանակներում:

Հաշվի առնելով հանրության առջև հաշվետու լինելու օրենքի պահանջը՝ 2019 թվականին Հանձնաժողովը կշարունակի հրապարակել իր գործունեության հաշվետվությունը:

1. Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառ

Հանրային ծառայությունների կարգավորման բնագավառում Հանձնաժողովի գործունեության գերակա ուղղություններն են.

- **էներգետիկայի բնագավառը և ջրային համակարգը,**
- **հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), հեռուստատեսության և ռադիոյի ու փոստային կապի բնագավառները,**
- **տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառը** (սակագների սահմանման և վերանայման մասով):

էներգետիկայի բնագավառը ներառում է էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջերմամատակարարման համակարգերը:

Արցախի Հանրապետությունում գործում է մեկ՝ 30 000 կՎտ-ից բարձր տեղակայված հզորությամբ (Սարսանգ ՀԷԿ, 50 ՄՎտ դրվածքային հզորությամբ) և 19՝ մինչև 30 000 կՎտ տեղակայված հզորությամբ հիդրոէլեկտրակայան (փոքր ՀԷԿ-եր):

Կառուցման փուլում է գտնվում 17 փոքր հիդրոէլեկտրակայան՝ 88,219 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ և 510,52 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքով: Կառուցվող փոքր ՀԷԿ-երից 2019 թվականի ընթացքում արտադրության գործունեություն կսկսեն 9-ը ՀԷԿ:

Փաստաթղթավորման փուլում են գտնվում փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության 6 և արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության 1 լիցենզիայի հայտեր:

էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի ներկրում, արտահանում, հաղորդում և բաշխում իրականացնում է մենաշնորհային դիրք ունեցող «Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերությունը:

Գազամատակարարման համակարգում բնական գազի ներկրման, փոխադրման և բաշխման գործունեություն է իրականացնում մենաշնորհային դիրք ունեցող «Արցախ գազ» փակ բաժնետիրական ընկերությունը:

Ջերմամատակարարման համակարգում Ստեփանակերտ քաղաքում ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեություն է իրականացնում «Ջերմային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 14 կաթսայատների միջոցով: Շուկայում առկա են նաև մինչև 5,8 մեգավատտ դրվածքային հզորությամբ այլ տնտեսավարող սուբյեկտներ:

Ջրային համակարգում լիցենզավորված են «Ջրմուղ-կոյուղի», «Ջրամատակարարում և ջրահեռացում», «Բարեկարգում» և «Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությունները: Ջրային համակարգի կառուցվածքային

փոփոխությամբ և ընկերությունների վերակազմակերպմամբ պայմանավորված՝ 2019 թվականին նախատեսվում է խմելու և ոռոգման ջրային համակարգի օգտագործման 5 թույլտվության տրամադրում:

Ջեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում լիցենզավորված երեք ընկերություններից գործունեություն է ծավալում մեկ ընկերություն, իսկ մյուս երկու ընկերությունները լիցենզիաներով նախատեսված գործունեության տեսակներով ներկայումս չեն զբաղվում:

Հանձնաժողովի կողմից կապի տարբեր տեսակների համար տրամադրված են ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություններ 10 ընկերության: **Ջեռուստատեսության և ռադիոյի բնագավառում** տրամադրված արտոնագրերի (լիցենզիաների) հիման վրա ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) գործունեությամբ զբաղվում է 11, իսկ հեռուստածրագրերի հեռարձակմամբ (վերահեռարձակմամբ)՝ չորս ընկերություն, որից երկուսը՝ եթերային, երկուսը՝ կաբելային: Արցախի Հանրապետությունում գործում է մեկ հանրային հեռուստառադիո-ընկերություն:

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության ու հեռուստատեսության և ռադիոյի բնագավառների զարգացման միջազգային միտումները՝ Հանձնաժողովը շարունակելու է աշխատանքները բնագավառների դինամիկ զարգացման, գործարար միջավայրի բարելավման, ծառայությունների հասանելիության ապահովման և առկա ենթակառուցվածքների զարգացման և ընդլայնման ուղղությամբ:

Ծրագրային տարում հեռահաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի ու փոստային կապի բնագավառներում Հանձնաժողովը նախատեսում է՝

- ուղորտը կարգավորող օրենսդրության պահանջներին լիցենզավորված ընկերությունների գործունեության համապատասխանությունն ստուգելու նպատակով կազմակերպել մոնիթորինգներ և ստուգումներ, հեռուստառադիոընկերությունների եթերների ընտրանքային դիտարկումներ,
- ուսումնասիրել ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների ստացման համար ներկայացվող հայտերը,
- աշխատանքներ իրականացնել Արցախի Հանրապետության տարածքում՝ առանց թույլտվության ռադիոհաճախականություններ օգտագործող անձանց օրինական դաշտ ներգրավելու ուղղությամբ,
- ուշադրության կենտրոնում պահել լայնաշերտ (արագագործ) ինտերնետ հասանելիության ծառայությունների բարելավման հարցը, ինչի համար կիրականացվեն արագագործ ինտերնետային ծառայություններ մատուցելու հնարավորությունների մեծացմանը նպաստելուն ուղղված քայլեր:

Կարգավորվող ոլորտի իրավական բարեփոխումներ. Հանձնաժողովի առաջնահերթ խնդիրներից է համարվում կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ նպատակ ունենալով ապահովել սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանությունը, շահերի հավասարա-կշռումը, մրցակցային միջավայրի զարգացման համար պայմանների ստեղծումը, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսումը և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովումը: Հանձնաժողովը ապահովելու է կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող անձանց և սպառողների միջև փոխհարաբերությունների, կարգավորման ոլորտում առաջացած խնդիրների իրավական կարգավորումը:

2019 թվականին Հանձնաժողովը ձեռնամուխ կլինի էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգերի կարգավորման իրավական դաշտի բարեփոխումների՝ մի շարք իրավական ակտերի լրամշակման և կատարելագործման միջոցով:

Մասնավորապես.

- արևային էլեկտրակայանների զարգացման միտումներով պայմանավորված լրամշակվելու են ոլորտը կարգավորող գործող իրավական ակտերը,

- կմշակվեն կարգավորվող ընկերությունների համար ազգային հաշվային պլանին և այլ իրավական ակտերին համապատասխանող հաշիվներ և ենթահաշիվներ կարգավորմանը վերաբերվող հաշվետվությունների ներկայացման համար, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (կարգավորվող) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների ու ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն,

- լրամշակվելու են էլեկտրական էներգիայի մատակարարման՝ մատակարար-սպառող պայմանագրերի օրինակելի ձևերը՝ նպատակ ունենալով ավելի ապահովել սպառողների շահերը,

- փոփոխություններ և լրացումներ կկատարվեն սակագների հաշվարկման մեթոդիկաներում՝ մեծ ուշադրություն դարձնելով նյութական ծախսերին և կատարվող ներդրումներին,

- լրամշակվելու է էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ Հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգը,

- փոստային կապի բնագավառում Հանձնաժողովի իրավասությանը վերաբերող մասով կիրականացվեն օրենսդրական կարգավորումներ,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքում կատարվող փոփոխություններով պայմանավորված գործող իրավական ակտերը կհամապատասխանեցվեն օրենսդրությանը և ըստ անհրաժեշտության կմշակվեն նոր իրավական ակտեր:

Սակագնային քաղաքականություն. Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

Սակագնային քաղաքականության կատարելագործման նպատակով էներգետիկայի բնագավառում էներգետիկ հաշվեկշիռների հիման վրա կկատարվեն կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ու պարտավորությունների, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և սակագների վրա ազդող մի շարք այլ գործոնների վերլուծության և, ըստ անհրաժեշտության, սակագների վերանայման աշխատանքները:

Հանձնաժողովը պատշաճ կերպով կարձագանքի Արցախի Հանրապետություն ներկրվող հանրային նշանակության ապրանքների ներկրման վայրում սակագնային քաղաքականության փոփոխություններին:

Յեռահաղորդակցության բնագավառում նախատեսվում է.

- իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի ու փոստային կապի կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծություններ,

- ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն ունեցող անձանց 2019 թվականի ռադիոհաճախականության օգտագործման տարեկան և եռամսյակային վճարների հաշվարկ, իսկ նոր ռադիոհաճախականությունների տրամադրման և գործող թույլտվությունների դադարեցման դեպքերում՝ վերահաշվարկ,

- շարունակվելու է ոլորտի գերիշխող օպերատորի կողմից ներկայացված կամ Կարգավորողի նախաձեռնությամբ պահանջված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների կարգավորման ենթակա սակագների, ինչպես նաև փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման և վերանայման հայտերի ուսումնասիրությունը և վերլուծությունը:

Ներդրումային ծրագրեր. Հանձնաժողովի գործառնություններից իր կարևորությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը: Այն հնարավորություն է տալիս վերահսկել ներդրումների արդյունավետությունը՝ դրանք նպատակաուղղելով բնագավառներում նորարարական, ավելի ենթագախնայող և արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և մաշված սարքավորումների փոխարինմանը կամ ենթակառուցվածքների վերակառուցմանը և միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրերը:

Հաշվի առնելով, որ կարգավորվող ընկերությունների կատարած ներդրումների վերադարձի հետ կապված ծախսերը ներառվում են սպառողներին մատուցվող ծառայությունների սակագներում և հետևաբար անմիջական ազդեցություն ունեն սակագների չափերի վրա, Հանձնաժողովը ներդրումների առավել արդյունավետ ուղղությունների բացահայտման նպատակով 2019 թվականի ընթացքում շարունակվելու է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը:

Խրախուսվելու են ընկերությունների բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կնպաստեն էլեկտրաէներգետիկական, տեղեկատվական և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում նոր տեխնոլոգիաների ներդրմանը:

Շարունակական բնույթ են կրելու խմելու ջուր մատակարարող «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն ցուցանիշները բարելավելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության վերահսկում. Լիցենզավորումը կարգավորման այն հիմնական գործառնությունն է, որը թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության վերահսկման միջոցով

պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարող ընկերությունների նկատմամբ:

Հանձնաժողովը մշտապես հետևում և հետևելու է կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին, ինչպես ընկերություններից պահանջվող հաշվետվությունների, այնպես էլ ընտրանքային կարգով տեղերում իրականացվող մոնիթորինգների (մշտադատարկում) արդյունքների վերլուծության միջոցով:

Հեռահաղորդակցության բնագավառում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Արցախի Հանրապետությունում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի զարգացման և դաշտի ընդլայնման նպատակով՝ 2019 թվականի ընթացքում հայտարարել ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) լիցենզավորման մրցույթներ մի շարք ազատ (չզբաղեցված) հաճախականություններում,

- շարունակել Արցախի Հանրապետությունում ռադիոսիրողական գործով զբաղվելու ցանկություն հայտնող քաղաքացիներին համապատասխան թույլտվությունների տրամադրման գործընթացը, աջակցել ռադիոսիրողական գործով արդեն զբաղվողներին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիային՝ ռադիոսիրողներին և ռադիոսպորտսմեններին իր շուրջը համախմբելու ու որակավորման չափանիշներին սիրողական ռադիոսպորտորների համապատասխանությունն ստուգելու որակավորման քննությունների կազմակերպման հարցերում:

2. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ

Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության իրականացման ընթացքում առանձնապես կարևորվում է ապրանքային շուկայում մրցակցային իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը: Հանձնաժողովի 2019 թվականի գործունեությունը, ինչպես և նախորդ տարիներին, ուղղված կլինի Արցախի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցության պաշտպանության խրախուսման, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ձևավորման, ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության ուղորտներում առաջնահերթ խնդիրների լուծմանը: Հատուկ ուշադրության կարժանանան տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկաներում մրցակցության սահմանափակման, կանխման և արգելման այն գործողությունները կամ վարքագիծը, որոնք կարող են հանգեցնել.

- մենաշնորհ կամ գերիշխող դիրքերի չարաշահմանը,
- հականրցակցային համաձայնությունների կնքմանը (կայացմանը),
- գործողության մեջ դրված չհայտարարագրված կամ արգելված համակենտրոնացմանը,
- անբարեխիղճ մրցակցության գործողությանը,
- արգելված պետական օժանդակությանը:

Գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների բացահայտում և գործունեության վերահսկողություն. Ուսումնասիրության համար հիմնական թիրախ են հանդիսանում առաջին անհրաժեշտության ապրանքային շուկաները և այն շուկաները, որտեղ մրցակցության խրախուսման անհրաժեշտություն կա: Կարգավորման դաշտում առկա են 5

մենաշնորհ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ՝ 7 ապրանքային շուկաներում և 25 գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ՝ 48 ապրանքային շուկաներում:

Գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների գնային քաղաքականությունը վերահսկելու և գների ընդհանուր դինամիկան արձանագրելու նպատակով կշարունակվեն իրականացվել պարբերական դիտանցումները և գործունեության վերաբերյալ կիսամյակային տեղեկատվությունների վերլուծությունները:

Օրենսդրորեն լիազորվելու դեպքում Հանձնաժողովի կողմից կկարգավորվեն նաև առաջին անհրաժեշտության ապրանքների գները (ներկայումս միայն իրականացվում է առաջին անհրաժեշտության ապրանքների գների դիտանցում):

Ուսումնասիրությունների ընթացքում դիտարկվում են այնպիսի ապրանքատեսակներ, որոնք մի կողմից հանդիսանում են լայն սպառման և (կամ) սոցիալական նշանակության ապրանքներ, մյուս կողմից տվյալ շուկաներում ներմուծման մասնաբաժինը շուկայի ընդհանուր ծավալում էական է:

Ծրագրային տարում տնտեսական մրցակցության զարգացման ռազմավարական ուղղություններից կհանդիսանա ապրանքային շուկաներում ուսումնասիրությունների իրականացման արդյունքում մրցակցային խնդիրների վերհանումը և դրանց լուծումների համար համապատասխան աշխատանքների իրականացումը:

Ուշադրության կենտրոնում կպահվեն և ժամանակին կկանխվեն գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող այնպիսի գործողությունները, որոնք կարող են հանգեցնել այլ տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելը խոչընդոտելուն կամ շուկայից նրան դուրս մղելուն:

Բարեխիղճ մրցակցային միջավայրի ապահովում. Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության հիմնական ուղղություններից է նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող անբարեխիղճ մրցակցության գործողությունների բացահայտումը և կանխարգելումը, նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումը: Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների՝ տնտեսավարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթության առաջացման, տնտեսավարող սուբյեկտի կամ նրա գործունեության վարկաբեկման, հասարակության մոլորեցման, տնտեսավարող սուբյեկտի համբավի կամ վարկարժեքի վնասման դեպքերի բացահայտման և վերացման նպատակով ուսումնասիրություններ կիրականացվեն մի շարք ոլորտներում՝ մշտական ուշադրության կենտրոնում պահելով սուբյեկտների կողմից իրականացվող զեղչերի, տարբեր տեսակի ակցիաների արդյունքում առաջացած անբարեխիղճ մրցակցության դրսևորման հնարավոր դեպքերի բացահայտումը:

Հանձնաժողովն օրենքով վերապահված լիազորությունների շրջանակում 2019 թվականին շարունակելու է ուսումնասիրություններն ապրանքների և ծառայությունների շուկաներում մենաշնորհ և գերիշխող դիրքի չարաշահումների, հակամրցակցային համաձայնությունների, անբարեխիղճ մրցակցության դեպքերի և շուկաներում անհավասար մրցակցային միջավայր ձևավորող երևույթների բացահայտման, համակենտրոնացման նկատմամբ իրականացվող վերահսկողության ուղղությամբ:

Տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսավարող սուբյեկտների փաստացի գործունեության բացահայտման կամ Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով կիրականացվի ստուգում, ուսումնասիրություն, այդ թվում՝ հսկիչ գնում և (կամ) դիտանցում:

Հանձնաժողովը ուշադրության կենտրոնում կպահի ազատ տնտեսական մրցակցության պաշտպանության կարգավորումը նաև Արցախի Հանրապետության շրջաններում:

3. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը և համագործակցությունը

Հանձնաժողովի կարգավորման հիմնական սկզբունքներից է կարգավորման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը, որի նպատակն է հանրությանը հնարավորինս իրազեկ պահել կարգավորման գործընթացին:

2019 թվականին շարունակվելու են լուսաբանվել կարգավորվող բնագավառներում կատարված աշխատանքները, նախատեսվող ծրագրերը, տեղեկատվական նյութերն ու տեղեկանքները: Սահմանված կարգով թարմացվելու և համալրվելու է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջը: Օպերատիվ արձագանքվելու է «Թեժ գծի» միջոցով սպառողներից ստացված ահազանգերին, դիմում-բողոքներին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին: Ըստ անհրաժեշտության կազմակերպվելու են հարցազրույցներ, ճեպագրույցներ, քննարկումներ, սեմինար-խորհրդակցություններ, տարվելու է աշխատանք լրատվական ծառայությունների հետ:

Հանձնաժողովը ծրագրային տարում շարունակելու է ակտիվ համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների, պետական կառույցների, գործարար հանրության, սպառողների և հասարակական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ և նրանց միջոցով այլ երկրների կարգավորող մարմինների հետ՝ հետևյալ ուղղություններով՝

- թիրախային ոլորտների ապրանքային շուկաներում առկա մրցակցության իրավիճակի ուսումնասիրությունների իրականացման նպատակով Հանձնաժողովի աշխատակիցների կարողությունների զարգացում.
- գործընկերության ամրապնդում, համատեղ ծրագրերի և վարույթների իրականացում.
- մրցակցության քաղաքականության մասին իրազեկվածության բարձրացում.
- Հանձնաժողովի աշխատակիցների և այլ թիրախային խմբերի ներկայացուցիչների համար թեմատիկ դասընթացների ու սեմինարների կազմակերպում:

Հայաստանի Հանրապետության գործընկեր հանձնաժողովների հետ համատեղ աշխատանքային ծրագրերի շրջանակներում կիրականացվեն իրավական ակտերի նախագծերի մշակման, լրամշակման, համատեղ ուսումնասիրությունների իրականացման, ոլորտների մասնագետների փորձի փոխանակման, ուսուցողական և վերապատրաստման դասընթացներ, սեմինար պարապմունքներ, մասնակցություն տարբեր միջազգային քննարկումների՝ միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և տեղում կիրառելու նպատակով, աշխատակիցների փոխադարձ այցելություններ, տեղեկությունների պարբերաբար փոխանակում, ինչպես նաև տեխնիկական աջակցության ծրագրերի մշակում ու իրագործում:

Հանձնաժողովը կհամագործակցի նաև պետական այլ մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց հետ՝ իր լիազորությունների

իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու, փոխգործակցության, փոխօգնության և համագործակցության դաշտի ընդլայնման նպատակով:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրային ծառայությունների, տնտեսական մրցակցային իրավիճակի բարելավումը հնարավոր է ապահովել Հանձնաժողովի, պետական այլ մարմինների և հասարակության տարբեր խմբեր ներկայացնող կառույցների, լրատվամիջոցների, սպառողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ջանքերի մեկտեղման արդյունքում:

4. Դիմումների քննարկում և սպառողների շահերի պաշտպանություն

Հանձնաժողովի գործունեության կարևոր ուղղություններից է սպառողների դիմումների քննարկման գործընթացը:

Հանձնաժողով ներկայացվող հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում ծառայությունների մատուցմանը առնչվող գրավոր և բանավոր դիմումները, տեղակալություն ստանալու հարցումները քննարկվում են, և օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում յուրաքանչյուրին տրվում է համապատասխան լուծում կամ պարզաբանում: Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է դիմումների քննարկման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն: Վերը նշված գործառույթները, դիմումատուի իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքները շարունակական են և 2019 թվականին նույնպես գտնվելու են Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում:

Սպառողների շահերի պաշտպանության նպատակով Հանձնաժողովը համագործակցում է հասարակական կազմակերպությունների հետ: Վերոնշյալ համագործակցությունը առավել սերտ ու արդյունավետ դարձնելու նպատակով Հանձնաժողովը «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում նախատեսված է լրացում, որի համաձայն Հանձնաժողովի տարեկան բյուջեի 1 տոկոսի չափով հաշվարկված գումար կուղղվի հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով:

Հանձնաժողովի յուրաքանչյուր տարվա ծրագրի նախագիծը, պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվելուց բացի, «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում նախատեսվող փոփոխությունները Արցախի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվելու դեպքում, համապատասխան գրություններով կուղարկվի հանրային ծառայությունների և տնտեսական ոլորտում կարգավորվող ընկերություններին և սպառողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններին:

5. Պետական բյուջե պարտադիր վճարների գծով մուտքերի ապահովումը և հանձնաժողովի պահպանման ծախսերի ֆինանսավորումը

2019 թվականին Հանձնաժողովի վերահսկողության ներքո կգտնվի կարգավորվող ընկերությունների կողմից Արցախի Հանրապետության պետական բյուջե մուտքերի ապահովման գործընթացը՝ պետական տուրքերը, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման պարտադիր վճարները, կարգավորման պարտադիր վճարները:

Ըստ կանխատեսումների՝ 2019 թվականին նշված աղբյուրներից պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 821 664,1 հազար ՀՀ դրամ, որից ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման պարտադիր վճարներ՝ 596 718,3 հազար ՀՀ դրամ, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ՝ 200 770,8 հազար ՀՀ դրամ, պետական տուրքեր՝ 24 175,0 հազար ՀՀ դրամ:

Հանձնաժողովի պահպանման և գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումն կիրականացվի Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից՝ կարգավորման պարտադիր վճարների գծով մուտքերից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ